11461

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0139-23

Ձեռնարկողը՝ «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ
ք.Երևան, Վրացական փ. 17, բն.2

Գործունեությունը՝ ***Մասիս համայնքի Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Դպրոցականների փող. թիվ 24 հասցեում նախատեսվող հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0139-23

<09> 08 2023թ.

Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Դպրոցականների փող. թիվ 24 հասցեում նախատեսվող հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Մասիս համայնք, Մասիս քաղաք Դպրոցականներ փ. 24

Ներածական մաս. ՀՀ կառավարության և Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում, Մասիս համայնքի Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Դպրոցականների փ. 24 հասցեում նախատեսում է կառուցել նոր հիմնական դպրոց, ապամոնտաժելով հինը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը, որպես քաղաքաշինական գործունեություն հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 792989 վկայականը / ծածկագիրը՝ 03-003-0110-0001/, Արարատի մարզի Մասիս համայնքի կողմից տրամադրված 2022թ. դեկտեմբերի 22-ի N CPP0-0000-4098 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատում, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման, հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 2.3 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության հողամասը իրենից ներկայացնում է հասարակական կառուցապատ տարածք՝ ծանրաբեռնված հին դպրոցի շենքով և օժանդակ շինություններով, որոնք նախատեսվում է ապամոնտաժել, ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով

անցնող միգրացիոն ուղիներ, բնության հատուկ պահպանվող և պատմամշակույթային հուշարձաններնույն պես չկան:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում՝ հարավ-արևելյան մասում: Ռելիեֆը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք՝ Արաքս և Վեդի գետերի կողմը:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների հետևյալ տարատեսակները իրար հաջորդող մոխրագույն և շագանակագույն կավ փափուկ պլաստիկ, մանր մոխրագույն ավազների նրբաշերտերով (3-10 սմ): Շերտն ունի համատարած բնույթ, հզորությունը 10.0 մ և ավելին է: Ժամանակակից լճա-ալյուվիալ բիոգեն ծագման առաջացումներ :

Տարածքում բուսահողը կազմում է 290խմ, որը կպահպանվի տարածքում և կօգտագործվի կանաչապատման համար:

Հիդրոերաերկրաբանական տեսակետից գրունտային ջրերը գտնվում են 3.0 մետր խորության վրա:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ նախագծվող դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման համար:

Արարատի մարզի Մասիս համայնքին բնորոշ է չոր, մայրցամաքային կլիման՝ երկարատև տաք ամառով և կարճատև մեղմ ձմեռով: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկան արժեքը կազմում է 64%, քամու միջին տարեկան արագությունը կազմում է 2.5 մ/վ, բացարձակ առավելագույն ջերմատիճանը՝ +43 ^{0}C, իսկ նվազագույն տարեկան ջերմաստիճանը՝ -29 ^{0}C: Տարեկան միջին մթնոլորտային տեղումների քանակը գնահատվում է 43 սմ:

Հիմնական դպրոց կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողի ընդհանուր մակերես՝ 2.3հա,
- Կառուցապատման մակերես՝ 4689 քմ,
- Կանաչապատման մակերես՝ 5983 քմ,
- Բացօթյա մարզահրապարակի մակերեսը՝ 1306,25 քմ
- Ասֆալտապատ գոտու մակերեսը՝ 9289քմ
- Սալիկապատ գոտու մակերեսը՝ 460քմ
- Կաթսայատուն ՝ 27,84քմ:

Նախատեսվող գործունեությունը /այսուհետ՝ Մասնաշենքեր/ իրենից ներկայացնում է սեյսմիկ կոնստրուկտիվ կարով միացված 8 մասնաշենք: Մասնաշենքերից թվով 7-ը երկհարկանի են ՝ բարձրությունը 3.3 մ, յուրաքանչյուր մասնաշենքում նախատեսվում են երկուական հանդերձարաններ, մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ՝ սանհանգույցներով, ճաշարան: Վերջին մասնաշենքը՝ 8-ը կլինի միահարկ 6մ բարձրությամբ, որտեղ նախատեսվում է մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճ: Բոլոր մասնաշենքերում նախատեսված են նկուղային տարածք:

Մասնաշենքերում նախատեսվում են թեքահարթակներ և սակավաշարժ խմբերի համար նախատեսվող վերելակ, ինչպես նաև հարմարեցված սանհանգույց:

Բակում նախատեսվում են՝ բաց մարզահրապարակ, սալվածք, սիզամարգեր և ծառերի տնկում:

Բոլոր մասնաշենքերի տանիքները նախատեսվում է կառուցել լանջավոր՝ մետաղական ուղղանկյուն կտրվածքով խողովակներից, ցինկապատ թիթեղե ծածկույթով, իսկ մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի տանիքները նախագծվում են սենդվիչ պանելներով: Բոլոր տանիքները կունենան կազմակերպված արտաքին ջրահեռացում: Նախատեսվում է արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում դպրոցի տանիքին, որը կազմված է ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից:

Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների շրջանակում նախատեսվում է բոլոր արտաքին պատերի, տանիքների ջերմամեկուսացման աշխատանքներ: Դպրոցի ջեռուցումը նախատեսվում է դպրոցի տարածքում տեղակայված կաթսայատնով:

Մասնաշենքերի օդափոխությունը նախատեսված է ընդհանուր ներածման և արտածման համակարգերով՝ բնական և մեխանիկական դրդմամբ: Օդափոխության բոլոր ներածման համակարգերի օդատարերը տանիքից դուրս ջերմամեկուսացվում են փայլաթիթեղապատ ապակեբամբակով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 28 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ վերամբարձ ավտոկռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստներից, իսկ խտացված օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ԶԻՖ-55 մակնիշի): Տարածքում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները, կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների: Կանաչապատման աշխատանքների շրջանակում կտնկվի 27 կաղնիի, 18 կոնաձև թույաներ և 41 գնդաձև թույա:

Կանաչապատ գոտիների ոռոգման գործընթացը կկազմակերպվի նախատեսվող ոռոգման ցանցի միջոցով: Ոռոգման ցանցը նախագծված է Φ 50, 40, 32, 25 մմ արտաքին տրամագծով պոլիէթիլենային խողովակներով, որոնք կտեղադրվեն 0.4 մ խորության վրա, իսկ անցուղիներում խողովակները կանցկացվեն Φ150 մմ պողպատյա պատյանով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է հիմնականում ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Դպրոցի կառուցման հանձնարարությունը կատարելու են 42 աշխատող:

02543163
ՓՈՐՁԱՐՏՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող համայնքային ջրատարից, աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ:

Դպրոցի ջրամատակարարման համար նախատեսվում է իրականացնել d=110 մմ, Φ90մմ և Φ75մմ տրամաչափի պոլիէթիլենային բարձր ճնշման և Φ80մմ և Φ50մմ տրամաչափի պողպատյա խողովակներով, արտաքին ջրամատակարարման ցանցով:

Քանի որ կոյուղու համակարգը համայնքում բացակայում է, կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս ձևով կհեռացվեն նոր նախագծվող կենսաբանական մաքրման կայան և մաքրվելուց հետո կհեռացվեն դպրոցի հարակից տարածք:

Կոյողաջրերի հեռացման արտաքին ցանցը «Վեոլա ջուր» ՍՊԸ-ի կողմից տրված (01.12.2022 թ.) տեխնիկական պայմանների համաձայն, կմիացվի Դպրոցականներ փողոցով անցնող ցանցին:

Նախագծով նախատեսվում է 42,84 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կառուցվող դպրոցի բոլոր մասնաշենքերի տանիքին:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը, գազամատակարարումը կիրականացվի ըստ համապատասխան ենթակառույցների կողմից տրամադրված տեխնիկական պայմանների:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 912004000100 4/ 3կգ/օր, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբ (ծածկագիրը՝ 912006010100 4) 4775մ³, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր և փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 9890 մ³ ծավալով կտեղափոխվի Մասիս համայնքի կողմից հատկացված վայր, ամբողջությամբ կօգտագործվի հետլիցքում:

Դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղված հետևյալ միջոցառումները, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում, այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի չափումներ, որը կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում,
- բեռնատարներով փոխադրումները կիրականացվեն փակ ծածկով փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,
- կանոնավոր ջրցանում շինհրապարակից փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով,
- սարքավորումներն ապահովված կլինեն խլացուցիչներով,
- աղմկահույց աշխատանքներն կիրականացվեն օրվա ցերեկային ժամերին՝ նաև ուղղակի և թրթռումներիմ ակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 4 731470 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Մասիս համայնքի հիմնական դպրոցի հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Մասիսի համայնքապետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, շինարարական աշխատանքները իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնական դպրոցի կառուցման շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենքով սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով հարակից տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Փոշի առաջացնող սորուն նյութերի /ավազ, խիճ և այլն/ տեղափոխումը իրականացնել փակ ծածկով մեքենաներով, պահեստները ծածկվել համապատասխան բարձրության թաղանթով:
- Տարածքի կանաչապատումը իրականացնել համաձայն Մասիս համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Դպրոցականների փող. թիվ 24 հասցեում նախատեսվող հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան